

ՎԱՐՁՔ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՍԱՐԱԹԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԳԻՄՆԱԳՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

DUTY OF SOUL



2 Հունիս - Նոյեմբեր 2010
N 2 JULY - NOVEMBER 2010



ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԻՃԱԿԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

THE CONDITION
OF ARMENIAN MONUMENTS
IN WESTERN ARMENIA



1905 թ. Անիի Գագկաշեն եկեղեցու լեռնամասերի ժամանակ հայտնաբերված Գագիկ Ա թագավորի (989 - 1020) արձանը, որի ճակատագիրը 1920 թ. Կարսի գրավումից հետո անհայտ էր: Ներկայումս արձանից մի թևկոր՝ ձախ թևը, ցուցադրված է Էրզրումի թատնություն թանգարանում առանց բացատրագրի:

The statue of King Gagik I (989 to 1020) unearthed during the excavations of Gagkashen Church of Ani in 1905. Its fate has remained obscure ever since the conquest of Kars in 1920. At present a fragment of the statue, its left arm, is exhibited in the history museum of Erzurum without any explaining note.



2 Հունիս - նոյեմբեր 2010
N 2 JULY - NOVEMBER 2010

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Editor-in-chief
SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ Editor
EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈԿԳԱՆՆԻՍՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ-ՍՐԲԱԳՐԻԳ
Proof-reader (Armenian text)
HASMIK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԹԱՐԳԱՄԱՆԻԳ Translator
GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՑԱՅԻՆ ՓԵՎԱԿՈՐՈՂ
Designer
ARMEN GEVORGIAN

ՀՐԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION
Engaged in Informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223
ՏՐՎԱԾ 13.10.2010
Certificate No. 03U089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿԱՄՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Responsible for this issue
SAMVEL KARAPETIAN

ՏՊԱԳՐՎԵԼ Է
«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆԸ
Printed by
TIGRAN METZ Publishing House

ՏՊԱՋԱՆԱԿԸ՝ 1000
Number of copies: **1000**

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ
Baghramian 24g, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>
<http://www.raa.am>
✉ raayer@sci.am
☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture



Հրատարակվում է
 ՀՀ մշակույթի
 նախարարության
 հովանավորությամբ

Published under the
 patronage of the
 Ministry of Culture of the
 Republic of Armenia

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ 1915 Թ.-ԻՑ Ի ՎԵՐ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում կերտել է մշակույթի բազմաբնույթ և մեծաքանակ կոթողներ: Դրանց հիմնական մասը գտնվում է հայերի պատմական բնօրրանի՝ Հայաստանի տարածքում:

Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ 1915 թ., Երիտթուրքերի կառավարությունը նախ զավթած հայկական 6 նահանգները (Վան, Բաղեշ, Կարին, Խարբերդ, Սեբաստիա, Տիգրանակերտ) թուրքական պետության կազմում ամրագրելու նպատակով ողջ երկրամասում իսպառ բնաջնջում է բնիկներին, ապա 1920 թ. հոկտեմբերին հարձակվում 1918 թ.-ից անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության վրա և նվաճում նորանկախ երկրի արևմտյան շրջանները, մասնավորապես Կարսի մարզը և նույնիսկ օսմանյան պետության զավթումների բարձրակետում երբևէ թուրքերի ձեռքը չընկած Սուրմալուի գավառը:

Օգտվելով Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանր կացությունից՝ հանրապետության հյուսիսային և արևելյան որոշ շրջաններ էլ զավթում են թուրքերին դաշնակցած Վրաստանն ու Ադրբեջանը:

Այսպիսով, 1920 թ. նոյեմբերից խորհրդայնացած Հայաստանը և 1991 թ. ծնունդ առած նրա իրավահաջորդ ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր սահմաններում ներառում է հայոց հայրենիքի շուրջ 1/10-րդ մասը միայն, իսկ մնացածը զավթված և բռնակցված է մնում հարևան պետություններին:

Ի հետևանք այս ամենի՝ հայկական պատմական հուշարձանների մեծագույն մասն էլ ինքնաբերաբար գտնվում է ներկայիս Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Անցած 8-9 տասնամյակների ընթացքում (1920 թ.-ից ի վեր) Հայաստանի հարևան պետությունները (Թուրքիա, Ադրբեջան,

THE CONDITION OF ARMENIAN MONUMENTS IN WESTERN ARMENIA SINCE 1915

In the course of their centuries-old history, the Armenians have built and created a wide variety of cultural monuments most of which are situated in the territory of Armenia, the historical cradle of the Armenian nation.

During World War I, in 1915, the Young Turks carried out the total extermination of the native population of the 6 Armenian provinces—Van, Baghesh, Karin, Kharberd, Sebastia and Tigranakert—that remained usurped by Turkey so that their annexation to the Turkish state would become complete and indisputable. Later, in October 1920, the Turks attacked the Republic of Armenia, which had proclaimed independence in 1918, and occupied the western parts of the country, particularly the region of Kars and even the district of Surmalu that had never fallen into the hands of Turkish invaders even when they were at the height of their conquests.

Taking advantage of the grave situation in which Armenia had found itself, Georgia and Azerbaijan, which acted in alliance with Turkey, annexed some of the northern and eastern parts of the Armenian republic.

Due to these circumstances, Soviet Armenia, which came into being in November 1920, and its assignee, the present-day Republic of Armenia, whose foundation dates back to 1991, received only about the 1/10th part of the Armenian Homeland, whereas the rest of its territory remains annexed by the neighbouring states.

In the aftermath of all this, the vast majority of Armenian historical monuments are located outside the borders of the present-day Republic of Armenia.

During the past 8 to 9 decades—since 1920—the states adjacent to Armenia, namely Turkey, Azerbaijan, Georgia and Iran, have not been unanimous in their approaches to the preservation

Վրաստան, Իրան) հայկական պատմական հուշարձանների պահպանության հարցում դրսևորել են տարբեր մոտեցումներ: Բացառությամբ Իրանի՝ Հայաստանի Հանրապետության մյուս երեք հարևանների տարածքներում հայկական պատմական հուշարձանները ոչ միայն ենթակա չեն եղել պահպանության, այլև ծրագրված և միտումնավոր ոչնչացվել են:

Ուսումնասիրելով անցած մի քանի տասնամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանում գտնվող պատմական հուշարձաններին վերաբերող տվյալները՝ միանգամայն ակներև է, որ ցեղասպանության միջոցով Արևմտյան Հայաստանը բնիկներից պարպելուց հետո թուրքական իշխանությունները լծվել են բնիկներից ավանդված նյութական մշակույթի հուշարձաններն անհետացնելու գործին, քանի որ նրանց պարզունակ մտայնությամբ հայկական հուշարձանները դիտարկվում են որպես ուրացված և ժխտված պատմական իրականությունը մատնող անշունչ, սակայն չափազանց խոսուն վկաներ:

Այսպիսով, հազարամյակների ընթացքում ստեղծված և իրավամբ համամարդկային քաղաքակրթության անքակտելի արժեք համարվող հայկական պատմական բազմազար հուշարձաններ թուրքական իշխանությունների մոլագարությամբ ջնջվեցին հողի երեսից: Երևույթ, որի գործողությունների կանխատեսված կերպն ու ծավալները հաստատում են թուրքական կառավարության իրագործած եղեռնը նաև հայ մշակույթի հանդեպ:

Հատկանշական է, որ ջարդարարության առաջնային թիրախ էին ընտրվում հատկապես այն հուշարձանները, որոնք իրենց գոյությամբ առավել ցայտուն էին մատնանշում բնիկների ներկայությունը թեկուզ երբեմնի իրենց պատմական հայրենիքում: Այս պատճառով առաջնահերթորեն ոչնչացվում են հայ մշակույթի քրիստոնեական շերտի բաղկացուցիչ մաս կազմող վանքերն ու եկեղեցիները, բազմազար արձանագիր տապանաքարերով և խաչքարերով հարուստ հայկական գերեզմանոցները: Մինչդեռ հայկական կամուրջներից ու աղբյուր-

of Armenian historical heritage. With the exception of Iran, the other three neighbours of the Republic of Armenia have not ever concerned themselves with the preservation of Armenian historical monuments; moreover, Armenian monuments have been constantly undergoing deliberate demolition in these countries.

Research into the condition of historical monuments in Western Armenia makes it evident that since the genocide of its native population, the Turkish authorities have been busy destroying the monuments of culture comprising their heritage. By doing so, they want to get rid of Armenian monuments which expose historical reality—that historical reality which Turkey has been denying for about a century now—as mute but very eloquent witnesses to history.

In their frenzy of annihilating everything Armenian, the Turkish authorities have already totally wiped out thousands of centuries-old Armenian historical monuments that are justly considered as forming an inseparable part of human civilization. The extent of the premeditated atrocities perpetrated against Armenian monuments, and the fact that they are always carefully planned by the Turkish Government prove that they are carrying on the genocide of the Armenian nation, this time targeting their cultural heritage.

It is remarkable to note that the acts of barbarity are primarily committed against those monuments which unflinchingly attest to the former existence of the natives of Western Armenia in their historical homeland. For this reason, the wave of demolition is first of all directed against churches, monasteries and cemeteries abounding in tombstones and cross-stones with thousands of Armenian-language epitaphs and inscriptions (all these forming part of Armenian cultural heritage of Christian era). As for other Armenian monuments, such as bridges, springs, houses or public buildings, these are mostly stripped of their Armenian-language construction inscriptions, for without them, their appropriation becomes easier and permissible.

ներից, բնակելի կամ հասարակական կառույցներից անհետացվում են գլխավորապես հայերեն շինարարական արձանագրությունները, քանի որ այդ կերպ հնարավոր է թույլատրելի է նկատվում դրանց շահագործումն ու յուրացումը:

1928 թ.-ից Արևմտյան Հայաստանում զանգվածաբար անվանափոխության են ենթարկվում նաև բնակավայրերի և աշխարհագրական բնիկ հայկական տեղանունները:

1940-60-ական թվականներին հայկական հուշարձաններն Արևմտյան Հայաստանում ոչնչացվում են նաև երկրի զինուժի կողմից: Դրանցից շատերը, զինավարժությունների ժամանակ իբրև թիրախ, պայթեցվել են, իսկ սրբատաշ քարերն օգտագործվել որպես շինանյութ ավելի հաճախ զորանոցների կառուցման ժամանակ: Մինչդեռ կանգուն մնացածները ցայժմ ծառայում են որպես գոմ, պահեստ, նույնիսկ բանտ, որոշ դեպքերում էլ վերածվում են մզկիթի կամ էլ հայտարարվում «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:

Հայկական եկեղեցիների ավերումը թուրքական իշխանությունները հաճախ պատճառաբանում են այս գոտում տեղի ունեցող երկրաշարժերով: Սակայն ինչպե՞ս են այդ երկրաշարժերն ընտրություն կատարում միևնույն ժամանակ չավերելով սելջուկյան ոչ մի հուշարձան...

Տարիներ շարունակ թուրքական լրատվամիջոցները լուրեր են տարածում, թե իբր հարուստ հայերը նախքան երկրից «հեռանալը» իրենց ոսկիները թաքցրել են այն քարերի տակ, որոնց վրա առկա են «անհավատների» գրություններ, խաչի քանդակ և այլն: Ոսկի գտնելու մարմաջով տարված Արևմտահայաստանի հայաթափ բնակավայրերը զբաղեցրած թուրք և քուրդ բնակչությունն անդադրում քանդել և տակավին քանդում է այն ամենը, ինչը հայկականություն է հուշում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն՝ 1915 թ.-ից հետո կանգուն մնացած 913 շինություններից 1974 թ. դրությամբ 464-ը իսպառ անհետացվել էր, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը վերականգնման լուրջ կարիք

Since 1928 the original Armenian toponyms and geographical names of Western Armenia have been renamed into Turkish ones.

Between the 1940s and '60s, the Armenian monuments of Western Armenia were also destroyed by the armed forces of Turkey. Most of them were exploded while being used as targets for shooting exercises, their finely-dressed stones being used as building material oftener in the construction of barracks. The Armenian monuments that are still preserved standing serve as cattlesheds, storehouses and even prisons. In some cases, they are turned into mosques, or are declared as specimens of "Seljuk architecture."

The Turkish powers often explain the destruction of Armenian monuments by earthquakes, but how do the earthquakes select between Armenian and Seljuk monuments without ever damaging any of the latter...?

Over many years, Turkish mass media have been making allegations that on their "leaving" the country, the wealthy Armenians hid their gold beneath stones bearing inscriptions, cross reliefs or other ornamental elements left by "infidels." Carried away with their crazy search for gold, the Turks and Kurds who live in the formerly Armenian-inhabited villages of Western Armenia have been incessantly digging out and destroying everything indicative of Armenian origin.

According to the information provided by UNESCO, as of 1974, out of the 913 monuments that had remained standing since 1915, 464 were totally levelled with the ground; 252 were reduced to ruins, and 197 were in bad need of restoration. Despite the law on the preservation and restoration of historical monuments adopted in Turkey, no monument was restored in this country up to the late 1990s. In recent years, the Turkish authorities have been implementing a policy of appropriating Armenian monuments by means of altering their features. They have restored Tigran Honents Church of Ani, as well as the emblem, the residential quarters and shopping area of this city site together with Arakelots (*Apostles*) Church in Kars and Sourb Khach (*Holy Cross*) Monastery on

ուներ: Հակառակ Թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանության ու վերականգնման օրենքի գոյության՝ մինչև 1990-ական թվականների վերջերը ոչ մի հուշարձան չի վերականգնվել: Վերջին տարիներին ավելի նենգափոխման և յուրացման ծրագիր իրականացնելով՝ իշխանությունները սկսել են Անիում Տիգրան Հոնենց եկեղեցու, զինանշանի, պարիսպների, բնակելի թաղամասերի և առևտրական շարքերի, Կարսի Առաքելոց եկեղեցու, Աղթամարի Սբ. Խաչ վանքի վերականգնման աշխատանքները: Թվարկվածների շարքում վերջինս միակ դրական բացառությունն է՝ շնորհիվ մասնագիտական բարեխիղճ վերահսկողությունն իրականացրած ճարտարապետ Ջաքարիա Միրդանօղլու:

Այն բանաձևից, որ ցեղասպանությունն էթնիկական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական, այլև նրա մշակույթի ոչնչացումն է, հետևում է, որ հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը թուրքական իշխանությունները գործադրել են նաև 1915 թ.-ից հետո և, ըստ էության, շարունակում են գործադրել ցայժմ: Կեցվածք, որը միանգամայն անհարիր և դատապարտելի է միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՄՈՍ-ի անդամ և եվրոպական ընտանիքի մաս կազմելուն հավակնող պետության համար:

Ժամանակակից Թուրքիայում ցեղասպանության ժխտումը դարձել է պետական քաղաքականություն: Այդ նպատակով ստեղծված և կառավարությունից հատուկ հովանավորվող կազմակերպությունները զբաղվում են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող բազմաթիվ գրքերի բազմալեզու հրատարակությամբ, տարածմամբ և քարոզչությամբ:



Այսպիսով, հայ մշակույթի նկատմամբ իրագործված և տակավին գործադրության մեջ գտնվող եղեռնը հետապնդում է երկու գլխավոր նպատակ՝ նախ ապացուցել, որ Արևմտյան Հայաստանը երբեք հայերի բնօրրանը չի եղել, և երկրորդ՝ Թուրքիայում հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Aghtamar Island. The last of the monuments mentioned comprises the only positive exception, for it was restored properly thanks to the conscientious attitude of the architect who supervised the process of work with a careful professional approach—Zakaria Mildanoghli.

Genocide means not only the physical extermination of a given ethnic or religious group, but also that of its culture; therefore, the genocide of Armenians did not come to an end in 1915. The Turkish authorities are still carrying it on—a demeanour that is absolutely impermissible for a state holding membership of such international organisations as UNESCO and ICOMOS, and striving for admittance into the European family.

In modern Turkey, the denial of the genocide of Armenians has grown into a state policy. Different organisations, set up for this particular purpose and enjoying the Government's special support, are actively engaged in carrying out anti-Armenian propaganda by publishing and spreading a great number of multi-language books gerymandering the history of the Armenian nation.

The ongoing genocide against Armenian culture has two main goals: to prove that Western Armenia has never been the historical cradle of the Armenian nation, and that no genocide was perpetrated against the Armenians in Turkey.






ՏԵԿՈՐ. Ար. Երրորդ դարից եկեղեցու (Ե դար) տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից և հատվածներ (լուս.՝ 1900-ական թթ.)

TEKOR. Sourb Yerrordutiun (Holy Trinity) Church (5th cent.) from the north-west, south-west and south-east; partial views of the church (photos 1900s)




ՏԵԿՈՐ. Սրբ. Երրորդություն եկեղեցու մնացորդների ընդհանուր տեսքը 1976 թ. (լուս.՝ Ջ. Բոլլի) և 2000 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)
TEKOR. The ruins of Sourb Yerrordutiun (Holy Trinity) Church as of 1976 (photo by J. Boll) and 2000 (photos by Samvel Karapetian)



ԲԱԳՎԱՎԱՆ. Բագրևանդի Սբ. Հովհաննու եկեղեցու (613-619 թթ.) ընդհանուր տեսքը հարավից և հատվածներ (լուս.՝ Հովսեփ Օրբելու, 1911-1912 թթ.)

BAGAVAN. A general view of St. Hovhan Church (613 to 619) of Bagrevand from the south; partial views of the monument (photos by Hovsep Orbeli, 1911 to 1912)



ԲԱԳՎԱՆ. Բագրևանդի Ար. Հովհաննու եկեղեցու տեղը 1940-ական թթ. վերջերին հիմնահատակ քանդումից հետո: Քարերի մի մասն գործածվել է վանքի շուրջ զոյացած Տաշևեր գյուղում բնակարաններ կառուցելիս, իսկ մեծ մասը փոխադրվել է Աղրը քաղաք և օգտագործվել տեղի՝ 1950 թ. կառուցված գլխավոր մզկիթի ստորին շարվածքում (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2000, 2008 թթ.)

BAGAVAN. The site of St. Hovhan Church (613 to 619) of Bagrevand after its complete annihilation in the late 1940s. Part of its stones were used in the construction of houses in Tashevler Village that was founded around the monastery, but most of them were transported to Ağrı, where they were laid in the lower stonework of the principal mosque (1950) of the town of (photos by Samvel Karapetian, 2000, 2008)



ԱՐԳԻՆԱ. Կաթողիկե եկեղեցու (ժ դար) տեսքը հարավից, հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, արևմուտքից և հյուսիս-արևելյան որմնամույթի խոյակները (լուս.՝ 1900-ական թթ.)

ARGINA. The cathedral (10th cent.) from the south, north-west, south-west and west; the built-in wall capitals of the north-eastern wall pylon of the cathedral (photos 1900s)



ԱՐԳԻՆԱ. Կաթողիկէ եկեղեցու (ժ դար) մնացորդները 1940-1950-ական թթ. իրականացված պայթեցումից և սրբատաշ քարերի յուրացումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

ARGINA. The remnants of the cathedral (10th cent.) after its explosion between the 1940s and 1950s and the appropriation of its finely-dressed stones (photos by Samvel Karapetian, 2005)





ԵՐԱՋԳԱՎՈՐՍ (ՇԻՐԱԿԱՎԱՆ). Սբ. Փրկիչ Եկեղեցու (Թ դար) տեսքը հարավից, հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, հյուսիս-արևմուտքից, հատված Եկեղեցու հյուսիսային պատի առջև, հարավային ճակատի արևելյան որմնախորշի պատկը, նույն ճակատի կենտրոնից բացված լուսամուտները և լուսամուտի պսակ հարավային մուտքի վերին ծախ անկյունում (լուս.՝ 1900-1910-ական թթ.)

YERAZGAVORS (SHIRAKAVAN). Sourb Prkich (Holy Saviour) Church (9th cent.) from the south, south-west, south-east and north-west; a partial view of the area in front of the northern wall of the church; the crown of the eastern niche of its southern facade; the windows opening from the central part of the same facade, and a window crown at the upper left corner of the southern entrance of the church (photos 1900s to 1910s)



ԵՐԱԶԳԱՎՈՐՍ (ՇԻՐԱԿԱՎԱՆ). Սբ. Փրկիչ եկեղեցու (Թ դար) մնացորդները 1950-1960-ական թթ. կատարված պայթեցումներից և ավերումներից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

YERAZGAVORS (SHIRAKAVAN). The remnants of Sourb Prkich (Holy Saviour) Church (9th cent.) after the acts of explosion and destruction carried out between the 1950s and 1960s (photos by Samvel Karapetian, 2006)





ՎԱՆԻԳԵԿՆ. Սբ. Բարդուղիմեոս առաքյալ վանքի (Թ-ժԷ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1917 թ.), հատվածներ արևմտյան ճակատից (լուս.՝ ճարտ. Բահմանի, 1913 թ.)

VANKIGEGH. The monastery of St. Bartholomew the Apostle (9th to 17th cents.) from the south-west (photo 1917); partial views of the western facade of the church (photos by architect Bahmann, 1913)




ՎԱՆՔԻԳԵՂ. Սբ. Բարդուղիմեոս առաքյալ վանքի (Թ-ժ է դդ.) տեսքը հարավ-արևմուտքից 1940-60-ական թթ. պայթեցումից և ավերումներից հետո, հատվածներ արևմտյան ճակատի հարդարանքից (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի, 1978 թ.), ռազմական հենակետի վերածված ընդհանուր տեսքը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

VANKIGEGH. The monastery of St. Bartholomew the Apostle (9th to 17th cents.) from the south-west after the acts of explosion and demolition committed between the 1940s and '60s; partial views of the decoration of its western facade (photos by architect Armen Hakhnazarian, 1978); the site with a military base stationed there (photos by Samvel Karapetian, 2006)



ՆԱՐԵԿ. Նարեկավանքի (Թ-ԺԹ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.), հարավ-արևելքից (2 նկար, առաջինը՝ գերմանական «Գլոբուս» հանդեսի 1870 թ. համարից) և կրկին հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.)

NAREK. Narek Monastery (9th to 19th cents.) from the south-west (photo by Yervand Lalayan, 1900s), south-east (2 photos, the first of them taken from the German journal *Globus*, 1870), and again from the south-west (unknown photographer, 1900s)



ՆԱՐԵԿ. վանքն իսպառ ոչնչացվել է 1940-1950-ական թթ.: Եկեղեցիների տեղում 1970-ական թթ. կառուցվել է մզկիթ, որի շուրջը կառուցապատվել է բնակելի շինություններով (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2004, 2007 թթ.)

NAREK. The monastery was totally levelled with the ground between the 1940s and 1950s. In the 1970s, a mosque was built in the site of the churches with houses erected around it (photos by Samvel Karapetian, 2004, 2007)




ՏԻԳՆԻՍ ԳՅՈՒՂ. Տիգնիսի բերդի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.) և բերդի մնացորդները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

TIGNIS VILLAGE. A general view of the castle of Tignis from the south-east (photo by architect Toros Toramanian, 1900s); the remnants of the castle (photo by Samvel Karapetian, 2005)



ՏԻԳՆԻՍ ԳՅՈՒՂ. Տիգնիսի բերդի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.) և բերդի մնացորդները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)
TIGNIS VILLAGE. A general view of the castle of Tignis from the north-east (photo by architect Toros Toramanian, 1900s); the remnants of the castle (photo by Samvel Karapetian, 2005)



ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ՎԱՐԱՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆՔ). վանքի (Ե-ժԹ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1900-ական թթ. և Բոդիլ Բյորնի, 1905 թ.), տեսարաններ հյուսիս-արևմուտքից, 2 նկար հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակներն անհայտ, 1910-ական թթ.)

INNAKNIAN SOURB KARAPET (GLAKAVANK). The monastery (5th to 19th cents.) from the south-west (photos by Vardan Hambikian, 1900s, and Bodil Biorn, 1905); the monastery from the north-west, and 2 photos showing it from the south-west (photos by unknown photographers, 1910s)





ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆԶ). գլխավոր կառույցների տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Բոդիլ Բյորնի, 1905 թ.), հյուսիս-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և արևմուտքից (լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1910-ական թթ.)
INNAKNIAN SOURB KARAPET (GLAKAVANK). The principal buildings of the monastery from the south-west (photo by Bodil Biorn, 1905), north-west (unknown photographer, 1910s) and west (photo by Vardan Hambikian, 1910s)





ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆԷ), վանքի մնացորդները 1972 թ. (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի)
INNAKNIAN SOURB KARAPET (GLAKAVANK), The ruins of the monastery in 1972 (photos by architect Armen Hakhnazarian)



ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆԹ). վանքի մնացորդները 1972 թ. (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի)
INNAKNIAN SOURB KARAPET (GLAKAVANK). The ruins of the monastery in 1972 (photos by architect Armen Hakhnazarian)



ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐՁՔԵՑ (ԳԼԱԿԱՎԱՆԹ). վանքի մնացորդները 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)
INNAKNIAN SOURB KARAPET (GLAKAVANK). The remnants of the monastery in 2006 (photos by Samvel Karapetian)



ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆԶ). վանքի մնացորդները 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)
INNAKNIAN SOURB KARAPET (GLAKAVANK). The remnants of the monastery in 2006 (photos by Samvel Karapetian)




ՄՇՈ ԱՐԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ. վանքի (Ե-ԺԹ դդ.) տեսքն արևմուտքից (լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1910-ական թթ.) և արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. The monastery (5th to 19th cents.) from the west (photo by Vardan Hambikian, 1910s) and east (unknown photographer, 1900s)



ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ. վանքի (Ե-ԺԹ դդ.) տեսքն արևմուտքից (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի, 1972 թ.) և արևելքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. The ruins of the monastery (5th to 19th cents.) from the west (photo by architect Armen Hakhnazarian, 1972) and east (photo by Samvel Karapetian, 2006)




ՄՇՈ ԱՐԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ. վանքի (Ե-ժԹ դդ.) տեսքն արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. The monastery (5th to 19th cents.) from the east (unknown photographer, 1910s) and south-west (unknown photographer, 1900s)



ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ. վանքի (Ե-ժԹ դդ.) տեսքն արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. The ruins of the monastery (5th to 19th cents.) from the east and south-west (photos by Samvel Karapetian, 2006)



ՄՇՈ ԱՐԱՔԵԼՈՏ ՎԱՆՔ. գերեզմանոցի ընդհանուր (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և հատվածական (լուս.՝ Մ. Ցիցիկյանի, 1910-ական թթ.) տեսարաններ

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. General (unknown photographer, 1910s) and partial (photos by M. Tsitsikian, 1910s) views of the monastic cemetery



ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՍԹ. գերեզմանոցի ընդհանուր տեսքը 1910-ական թթ. (լուս.՝ Մ. Ցիցիկյանի) և արդեն հիմնահատակ ոչնչացումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. A general view of the monastic graveyard (photo by M. Tsitsikian, 1910s) and its site after its total obliteration (photo by Samvel Karapetian, 2006)




ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ. վանքի գերեզմանոցում գտնվող խաչքար (1144 թ.) կերտված Դավիթ Անհաղթ փիլիսոփայի հիշատակին (լուս.՝ 1960-ական թթ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. A cross-stone (1144) from the monastic graveyard erected in memory of philosopher David the Invincible (photo by Priest Shavarsh Palemian, 1960s)



ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ. 1144 թ. Դավիթ Անհաղթ փիլիսոփայի հիշատակին կանգնեցված խաչքարի ջարդոտված մնացորդները տակնուվրա արված գերեզմանոցից հարավ՝ Լեռնալանջին (Լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

ARAKELOTS MONASTERY OF MOOSH. The fragments of the cross-stone erected in 1144 in memory of philosopher David the Invincible: found on the mountain slope south of the ruined cemetery (photos by Samvel Karapetian, 2006)



ԿՈՒՌՈՒՊԱՇ ԳՅՈՒՂ. Սբ. Աստվածածնի վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.) և վանքատեղին 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

KURUPASH VILLAGE. Sourb Astvatzatzin (Holy Virgin) Monastery from the south-east (photo by Yervand Lalayan, 1900s) and its site (photo by Samvel Karapetian, 2006)



ՇՈՒՇԱՆՑ ԳՅՈՒՂ. Կարմրվոր Սբ. Աստվածածնա վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.) և վանքատեղին 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)
SHOOSHANTS VILLAGE. Karmrvor Sourb Astvatzatzin Monastery from the south-east (photo by Yervand Lalayan, 1900s) and its site (photo by Samvel Karapetian, 2006)




ԲԱԳՆԱՅՐ ԳՅՈՒՂ. Բագնայրի վանքի տեսքը հյուսիս-արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և վանքի մնացորդները 2010 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

BAGNAYR VILLAGE. The monastery of Bagnayr from the north-east (unknown photographer, 1900s) and its ruins (photo by Samvel Karapetian, 2010)



ԲԱԳՆԱՅՐ ԳՅՈՒՂ. Բագնայրի վանքի տեսքն արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և մնացորդները 2010 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)
BAGNAYR VILLAGE. The monastery of Bagnayr from the east (unknown photographer, 1900s) and its ruins (photo by Samvel Karapetian, 2010)




ՏԵԿՈՐ ԳՅՈՒՂ. Խճկոնքի վանքի տեսքը հյուսիս-արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և վանքի մնացորդները 2002 թ. (լուս.՝ Սթիվեն Սիմի)

TEKOR VILLAGE. Khetzkonk Monastery from the north-east (unknown photographer, 1900s) and its surviving parts (photo by Stephen Sim, 2002)



ՏԵԿՈՐ ԳՅՈՒՂ. Խժկոնքի վանքի տեսքն արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և վանքի մնացորդները 2000 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

TEKOR VILLAGE. Khetzkonk Monastery from the east (unknown photographer, 1900s) and its surviving parts (photo by Samvel Karapetian, 2000)



ՀՈՌՈՍՈՍ. վանքին մերձակա հաղթական 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ)
HOROMOS. The triumphal arch adjacent to the monastery (unknown photographer, 1900s)



ՀՈՐՈՄՈՍ. վանքին մերձակա հաղթականարի մնացորդները 2008 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

HOROMOS. The remnants of the triumphal arch adjoining the monastery (photo by Samvel Karapetian, 2008)




ՀՈՐՈՄՈՍ. վանքը հարավ-արևելքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.) և ավերակները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)
HOROMOS. The monastery from the south-east (unknown photographer, 1900s) and its ruins (photo by S. Karapetian, 2008)



ՀՈՐՈՄՈՍ. վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (լուս. հեղ.՝ անհայտ, 1900-ական թթ.) և ավերակները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)

HOROMOS. The monastery from the north-east (unknown photographer, 1900s) and its ruins (photo by Samvel Karapetian, 2008)



ԱՆԻ. Հովվի եկեղեցու տեսքն արևելքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.)
ANI. Hovvi Church from the east (photo by architect Toros Toramanian, 1900s)



ԱՆԻ. Հովվի եկեղեցու տեսքը հարավից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)



ANI. The remnants of Hovvi Church from the south (photo by Samvel Karapetian, 2007)



ԱՆԻ. Միջնաբերդի գմբեթավոր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.)
ANI. The domed church of the citadel from the south-west (photo by architect Toros Toramanian, 1900s)



ԱՆԻ. Միջնաբերդի գմբեթավոր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2010 թ.)
ANI. The ruins of the domed church of the citadel from the south-west (photo by Samvel Karapetian, 2010)



ՕԴՈՒԶԼԻ ԳՅՈՒՂ (ՎԱՐՄԻ ՄԱՐԶ). Եկեղեցու (Թ դար) ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից, հյուսիս-արևմուտքից և հատված հարավային ճակատից (լուս.՝ 1910-ական թթ.)

OGHUZLI VILLAGE, KARS REGION. A general view of the church (9th cent.) from the south-west and north-west; a partial view of its southern facade (photos 1910s)



ՕԴՈՒԶԼԻ ԳՅՈՒՂ (ԿԱՐՍԻ ՄԱՐԶ). Եկեղեցու (Թ դար) ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելքից և հատվածներ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)

OGHUZLI VILLAGE, KARS REGION. A general view of the church (9th cent.) ruins from the south-west and north-east; partial views of the church (photos by Samvel Karapetian, 2008)




ԼԻՄ ԿՂՁԻ. Սբ. Գևորգ վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.) և 1950-60-ական թթ. պայթեցումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2004 թ.)

LIM ISLAND. A general view of St. Gevorg Monastery from the north-east (photo by Yervand Lalayan, 1900s); the monastery after its explosion between the 1950s and '60s (photo by Samvel Karapetian, 2004)




ԼԻՄ ԿՂԶԻ. Սբ. Գևորգ վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.) և 1950-60-ական թթ. պայթեցումից հետո (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի, 1972 թ.)

LIM ISLAND. A general view of St. Gevorg Monastery from the south-east (unknown photographer, 1900s); the monastery after its explosion between the 1950s and '60s (photo by architect Armen Hakhnazarian, 1972)



ԵՐԵՐԻՆ ԳՅՈՒՂ. Սբ. Սահակ վանքի ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ) և ավերումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

ERERIN VILLAGE. A general view of St. Sahak Monastery from the south (photo by Yervand Lalayan, 1900s) and its remnants after its destruction (photo by Samvel Karapetian, 2005)



ԳԵՎԱՇ ԲԱՂԱՔ. Սպիտակ վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ) և հիմնավեր վանքատեղին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

GEVASH CITY. Spitak (*White*) Monastery from the south-east (photo by Yervand Lalayan, 1900s); the site of the totally annihilated monastery (photo by Samvel Karapetian, 2005)



ԻԼԻ ԳՅՈՒՂ. Քառասուն խորան Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.)
և վանքի մնացորդները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

ILI VILLAGE. The church named Karasoon Khoran Sourb Astvatzatzin (*Holy Virgin of Forty Apses*) from the north-east (photo by
Yervand Lalayan, 1900s) and its remnants (photo by Samvel Karapetian, 2005)



ԿՈՂԲԱՆՑ ԳՅՈՒՂ. Սալնապատի վանքի տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ ճարտ. Բահմանի, 1913 թ.) և վանքի մնացորդները 1940-50-ական թթ. պայթեցումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2004 թ.)

KOGHBANTS VILLAGE. The monastery of Salnapat from the south-west (photo by architect Bahmann, 1913) and its remnants after its explosion between the 1940s and '50s (photo by Samvel Karapetian, 2004)



ԱՐԱՐԿԻՐ ՔԱՂԱՔ. Ս. Աստվածածինն մայր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.) և քանդումից հետո եկեղեցատեղին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

ARABKIR CITY. The mother church of Sourb Astvatzatzin (Holy Virgin) from the south-west (unknown photographer, 1900s) and its site after its demolition (photo by Samvel Karapetian, 2007)




ՆՈՐՈՎԱՆՑ ԳՅՈՒՂ (ՄՈՎՍ ԳԱՎԱՌ). Կարմիր կամրջի ընդհանուր տեսքը (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի, 1974 թ.) և 2005 թ. նորոգության ժամանակ ոչնչացված շինարարական արձանագրությունը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)
NOROVANTS VILLAGE, MOKS DISTRICT. General views of Karmir (Red) Bridge (photos by architect Armen Hakhnazarian, 1974) and its construction inscription that was destroyed during its renovation in 2005 (photos by Samvel Karapetian, 2008)



ՎԱՐԱԳՎԱՆՔ. վանքի տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1910-ական թթ.) և վանքի մնացորդները տեղում գոյացած քրդաբնակ Բաքրաչլը գյուղով հանդերձ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

VARAG MONASTERY. The monastery from the north-west (photo by Vardan Hambikian, 1910s) and its remnants with the Kurdish village of Bakrachli established around its site (photo by Samvel Karapetian, 2005)



ՎԱՐԱԳԱՎԱՆՔ. վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և վանքի մնացորդները տեղում գոյացած քրդաբնակ Բաքրաչլը գյուղով հանդերձ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

VARAG MONASTERY. The monastery from the south-east (unknown photographer, 1910s) and its remnants with the Kurdish village of Bakrachli established around its site (photo by Samvel Karapetian, 2005)




ՎԱՐԱԳՎԱՆՔ. վանքի տեսքն արևմուտքից (լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1910-ական թթ.) և վանքի մնացորդները հարավ-արևմուտքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

VARAG MONASTERY. The monastery from the west (photo by Vardan Hambikian, 1910s) and its remnants from the south-west (photo by Samvel Karapetian, 2007)




ԱՆԻ. Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք (961-1045 թթ.) Անիի զինանշանը՝ խաչի հովանու ներքո, Սմբատյան պարիսպներից բացված ավագ մուտքի ճակատին (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.) և «վերականգնումից» հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

ANI. The emblem of Ani, the capital of the Armenian kingdom of the Bagratids (961 to 1045), carved beneath a cross on the facade of the main gate of the city opening from Smbat's Ramparts (unknown photographer, 1900s); the emblem after its "restoration" (photo by Samvel Karapetian, 2007)



ՅԻՆՔԵԼ (ՈՇՏՈՒՆԻՔ ՎԱՎԱՍՏ), ԴԻՎԱՐՈՒՅՆԻ ՎԱՆՔ. վանքի Սբ. Զարուբյուն գլխավոր եկեղեցու (1447 թ.) տեսքն արևելքից 2005 թ. և 2010 թ. հոկտեմբերի 26-ին գյավաշցի մի խումբ գանձախույզ սրիկաների ձեռքով քանդելու պահին (լուս.՝ Սամվել Կարապետյանի): Վանդալական գործողությունները տեղի էին ունենում Յինգեղ (այժմ՝ Ինքոյ) գյուղի գյուղապետի, գյուղի միակ նավավարի համագործակցությամբ և տեղական իշխանությունների լուռ հովանավորությամբ: Ի դեպ, նախկինում ևս վանքը բազմիցս ենթարկվել է ավերիչ ոտնձգությունների. մասնավորապես՝ վանքի գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատից բացված լուսամուտից վեր ազուցված սրբատաշ քարերը, որոնց վրա արձանագրված էր Աղթամարի Զաքարիա կաթողիկոսի ջանքերով վանքի՝ 1447 թ. վերաշինության պատմությունը, ոչնչացվել էին 1976-2005 թթ. միջակայքում: Տակնուվրա էր արված նաև վանքի գերեզմանոցը, որտեղ 2010 թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ խաչքարերը տապալված և կտորատված էին, գերեզմանները՝ փորված և պղծված:

DIVABOYUN MONASTERY, HINGEGH VILLAGE, RSHTUNIK DISTRICT. The main church of the monastery, Sourb Harutiun (*Holy Resurrection*), dated 1447, from the east in 2005, and on 26 October 2010, at the moment of its destruction by a group of villains from Gyavash who were searching for gold in the sanctuary (photos by Samvel Karapetian). This act of vandalism was being perpetrated with the participation of the head of Hingegh (nowadays: Inkyoy) Village and the only shipmaster of the place, through the connivance of the local authorities. Formerly the monastery repeatedly underwent similar acts of barbarity: thus, the finely-dressed stones, laid above the window opening from the western facade of Sourb Harutiun Church (they were engraved with an inscription commemorating the renovation of the monastery in 1447 through the efforts of Zakaria Catholicos of Aghtamar), were destroyed between 1976 and 2005. The monastic cemetery was in a state of utter ruin and disorder: as of 26 October 2010, the local cross-stones were overthrown and broken to pieces, the graves being dug out and defiled.



ԽԱՉՔԱՐՆԵՐ «ԱՌԱՆՑ ԽԱՉԻ». Արևմտյան Հայաստանում այդպիսիք կարելի է հանդիպել ամենուրեք՝ Հռոմկլայում (լուս.՝ Հարթմուտ Յոֆրիխտերի, 1973 թ.), Կարսի շրջանի Կարմիրվանք գյուղի համանուն եկեղեցու արևմտյան ճակատին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.), Արդվինի շրջանում գտնվող Խանձթալի վանքում (լուս.՝ Գունդոլֆ Բրուքհաուզի, 1976 թ.), Կարսի պատմության բանգարան փոխադրված մայր եկեղեցու դռներին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2000 թ.):

CROSS-STONES WITHOUT CROSSES. Such cross-stones abound in the territory of Western Armenia: in Hromcla (photo by Hartmut Hofrichter, 1973); on the western facade of Karmirvank (*Red Monastery*) Church, situated in the village of the same name in Kars District (photo by Samvel Karapetian, 2005); in the monastery of Khandzta, Ardvin District (photo by Gundolf Bruchhaus, 1976), as well as on the doors of the mother church of Kars (no longer existing now) at present kept in the History Museum of the city (photo by Samvel Karapetian, 2000).



ԽԱՉՔԱՐԵՐ «ԱՌԱՆՑ ԽԱՉԻ». Արևմտյան Հայաստանում այդպիսիք կարելի է հանդիպել ամենուրեք՝ Անիի Տիգրան Հոնենց եկեղեցուն, Ակն գավառի Շրգու գյուղի եկեղեցուն, Կաղզվան գավառի Ղարավանք (այժմ՝ Տաշբուրուն) գյուղում գտնվող Խաչավանքում, Դերջան գավառի Ապրանք գյուղի եկեղեցուն (լուսանկարները՝ Սամվել Կարապետյանի, 2007-2008 թթ.) և այլուր: **CROSS-STONES WITHOUT CROSSES**. Such cross-stones can be seen in Tigran Honents Church of Ani; in the church of Sherzu Village, Akn District; in Khachavank, Gharavank (nowadays: Tashburun) Village, Kaghzvan District; in the church of Aprank Village, Derjan District (photos by Samvel Karapetian, 2007 to 2008), and in many other places in Western Armenia.




ԽԱԳՋԱՐԵՐ «ԱՌԱՆՑ ԽԱՅԻ» . Խաչի Հանրաճման ջեսարանը Աղթամարի Ար. Խաչ եկեղեցու արևմտյան ճակատին:

Ա լուա.՝ Արմեն Հախնազարյանի, 1972 թ., Բ լուա.՝ Սթիվեն Սիմի, 1997 թ.

CROSS-STONES "WITHOUT CROSSES." The Ascension of the Holy Cross on the western facade of Sourb Khach (Holy Cross) Church of Aghtamar.

Photo No. 1 by Armen Hakhnazarian, 1972, photo No. 2 by Stephen Sim, 1997





ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՄԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ
ՔՐԻՍՏՈՐԻԱՆ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE
ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2010